1. Սահմանումներ

Սույն Ընդհանուր Դրույթներում Կողմերն ընդունում են ներքոնշյալ տերմինները/սահմանումները հետևյալ նշանակությամբ՝

1.1. Կատարող

«Դիջիթալ Բրայենս» ՍՊԸ, որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և իր կանոնադրության հիման վրա:

1.2. Պատվիրատու

Ցանկացած անձ ում հետ ստորագրվել է Պատվերը:

1.3. Կողմ

Պատվիրատուն կամ Կատարողն առանձին հիշատակման ժամանակ:

1.4. Կողմեր

Պատվիրատուն և Կատարողը համատեղ հիշատակման ժամանակ:

1.5. ԸԴ

Սույն Ընդհանուր դրույթներ:

1.6. Պատվեր

Ծառայությունների մատուցման պայմանագիր կնքված Կատարողի և Պատվիրատուի միջև, որի համաձայն Կատարողը Պատվիրատուին մատուցում է ծառայություններ, ինչի անբաժան մասն է կազմում սույն ԸԴ-ն, և ինչը ստորագրելով Պատվիրատուն համաձայնվում է սույն ԸԴ-ին: Պատվերին կից հավելված(ներ)ում սահմանվում են Ծառայությունների անվանումը, գինը, վճարման ժամկետները և կողմերի համաձայնության այլ անհրաժեշտ տեղեկություններ և պայմաններ:

1.7. Պայմանագիր

Կողմերի միջև ստորագրված Պատվերն իր կիրառելի Հավելված(ներ)ով, համապատասխան Ծառայության վերաբերյալ Հատուկ Պայմաններով, Գնացուցակով,

1. ներառյալ ԸԴ-ն, և նույն առարկայի վերաբերյալ Կողմերի միջև ստորագրված այլ համաձայնագրերը միասին:

1.1. Ծառայություն(ներ)

Կատարողի կողմից մատուցվող ծառայությունները, որոնց գները, տեխնիկական հնարավորությունները և համապատասխան փաթեթները ներկայացված են Գնացուցակում, իսկ դրանց առանձին նկարագրությունը և մատուցման պայմանները ներկայացված են յուրաքանչյուր ծառայության Հատուկ Պայմաններում, որոնք տեղադրված են Կատարողի սպասարկման կենտրոնում և պաշտոնական կայքում (https://www.myweb.am/):

1.2. «Անձնական էջ»

Պատվիրատուի Ինտերնետ էջ, որը հասանելի է դառնում Պատվիրատուին Կատարողի կայքում (https://www.myweb.am/) համապատասխան հրահանգներին հետևելու արդյունքում: «Անձնական էջ»-ը պարունակում է տվյալներ Պատվիրատուի կողմից պատվիրված Ծառայությունների վերաբերյալ:

1.3. Օր

Օրացուցային օր ինչը հավասար է 24 (քսանչորս) ժամի:

1.4. Ամիս

Օրացուցային ամիս, ինչը կախված տարուց և կոնկրետ ամսվանից կարող է ունենալ 28, 29, 30 կամ 31 օր:

1.5. Գնացուցակ

Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների գները, տեխնիկական հնարավորությունները և համապատասխան փաթեթները, որոնք ներկայացված են Կատարողի սպասարկման կենտրոնում և պաշտոնական կայքում (https://www.myweb.am/):

1.6. Իրական վնաս

Փաստաթղթավորված ծախսեր, որոնք Կողմը կատարում է կամ պետք է կատարի վերականգնելու համար իր խախտված իրավունքը:

1.8. Բաց թողնված օգուտ

Չստացված եկամուտները, որոնք Կողմը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր:

2. Ընդհանուր դրույթներ / առարկան

2.1. Սույն ԸԴ-ն հանդիսանում է հրապարակային առաջարկ (օֆերտա) հրապարակված Կատարողի պաշտոնական կայքում (https://www.myweb.am/) և Պատվիրատուի կողմից ընդունվում է միայն դրանց ամբողջությամբ միանալով: Սույն ԸԴ-ն կարգավորում է Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման ընդհանուր կարգն ու պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Կողմերի պատասխանատվությունը իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար և Պայմանագրի լուծման կարգը:

2.2. ԸԴ-ն ընդունելու պահից, սույն ԸԴ-ն, համապատասխան Ծառայությունների Հատուկ պայմանները, Պատվերը և դրա Հավելված(ներ)ը, Գնացուցակի հետ միասին հանդիսանում են Պատվիրատուի և Կատարողի միջև կնքված պարտադիր ուժ ունեցող Պայմանագիր: ԸԴ-ն համարվում է Պատվիրատուի կողմից ընդունված՝ Պատվերը ստորագրելով (ներառյալ դրա Հավելված(ներ)ը) կամ Կատարողի պաշտոնական կայքով (https://www.myweb.am/) Պայմանագրի կատարմանն ուղղված համապատասխան գործողություններ կատարելով:

3. Հայտարարությունները և երաշխիքները (հավելյալ երաշխիքներից հրաժարում)

3.1. Կատարողը երաշխավորում է, որ ինքն իրավասու է տրամադրել ինտերնետ հասանելիության, տվյալների հաղորդման ծառայություններ, ինչը կարգավորվում է գործող ՀՀ Օրենսդրությամբ:

3.2. Պատվիրատուն հայտարարում և երաշխավորում է, որ ինքն իրավասու է ստանալ և օգտագործել Ծառայությունը:

2.1. Պատվիրատուն ընդունում է, որ «Անձնական էջ»-ից օգտվելու համար տրամադրված ծածկագիրը և այլ անհրաժեշտ տվյալները հայտնի են միայն իրեն, և նա պարտավորվում է դրանք չփոխանցել այլ անձանց:
«Անձնական էջ»-ում կատարված փոփոխությունները, այդ թվում նաև, նոր ծառայություններ ավելացնելը, պակասեցնելը և այլն, համարվում են կատարված անձամբ Պատվիրատուի կամ Պատվիրատուի կողմից համապատասխանաբար լիազորված անձի կողմից:

2.2. Պատվիրատուն ընդունում և երաշխավորում է, որ իր կողմից Ծառայության օգտագործումը չի խախտի ՀՀ օրենսդրությունը, Պայմանագիրը, այդ թվում այլ անձանց հեղինակային և հարակից իրավունքները:

2.3. Կատարողը Ծառայությունների վերաբերյալ և ծառայություններ մատուցելու հետ կապված չի տրամադրում որևէ հավելյալ երաշխիք, այդ թվում նաև որևէ կոնկրետ նպատակի համար կիրառելիության վերաբերյալ, բացառությամբ Պայմանագրում հստակորեն նշված երաշխիքների:

2.4. Եթե տրված երաշխիքներն ու պարտավորությունները խախտելու հետևանքով Կատարողին հասցվի վնաս, ապա Պատվիրատուն պարտավոր է հատուցել այդ վնասը՝ ներառյալ բաց թողնված օգուտը:

3. Գինը և վճարման կարգը

3.1. Ծառայության գինը որոշվում է ըստ Գնացուցակի և սահմանվում է Հավելված(ներ)ում:

3.2. Ծառայությունների դիմաց վճարման կարգը և ժամկետները սահմանվում են Հավելված(ներ)ում:

3.3. Ոչ ֆիզիկական անձ Պատվիրատուների դեպքում Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության վերաբերյալ հաշիվը, որը պետք է հաստատվի և վերադարձվի Կատարողին 7 (յոթ) օրվա ընթացքում: Պատվիրատուն իրավունք ունի

հաստատել,հաշիվը Կատարողի գրասենյակում՝ պատշաճ լիազորագրով: Ի դեպ մատուցված Ծառայության վերաբերյալ հաշիվը Կատարողի գրասենյակից վերցնելը Պատվիրատուի պարտականությունն է:

4.1. Էլեկտրոնային ստորագրության վերաբերյալ օրենսդրության կիրառման դեպքում՝ Կատարողը իրավունք ունի տրամադրել էլետրոնային հաշիվներ:

4.2. Ֆիզիկական անձ Պատվիրատուների դեպքում Կատարողի ներկայացրած Ծառայությունների մատուցման հաշիվը հանդիսանում է Պատվիրատուին՝ Ծառայությունների մատուցման փաստի և ծավալների վերաբերյալ ապացույց տվյալ հաշվում առկա տվյալների համաձայն: Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր Պատվիրատուների դեպքում երկկողմ հաստատված Ծառայությունների մատուցման հաշիվը հավաստում է մատուցված ծառայությունների ընդունվելը, եթե այլ բան ուղղակիորեն չի նշվում հաշիվը հաստատելիս:

4.3. Պատվիրատուն իրավունք ունի Ծառայությունների մատուցման հաշվի վերաբերյալ առարկություններ ներկայացնել մինչև հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա տասնհինգերորդ օրը՝ այդ մասին գրավոր նամակով տեղեկացնելով Կատարողին: Նշված ժամկետում հաշվի վերաբերյալ գրավոր նամակով առարկություններ չներկայացնելու դեպքում տվյալ հաշիվը համարվում է Պատվիրատուի կողմից անվերապահորեն հաստատված, իսկ տվյալ Ծառայությունը Կատարողի կողմից պատշաճ մատուցված:

4.4. Պատվիրատուի կողմից վճարում կատարելիս վերջինս պարտադիր պարտավոր է նշել այն Ծառայության անվանումը կամ Հավելվածի թիվը որի համար կատարվում է վճարումը: Ծառայության դիմաց վճարումը համարվում է կատարված դրամական միջոցները Պատվիրատուի հաշվին մուտքագրվելու պահից պայմանով, որ Պատվիրատուն վճարում կատարելիս նշել է Ծառայության անվանումը կամ Հավելվածի թիվը, որի համար կատարվում է վճարումը:

4.4. Միաժամանակ մի քանի Ծառայությունների համար վճարում կատարելիս Պատվիրատուն պարտավոր է որպես վճարման նպատակ նշել այն Հավելված(ներ)ը, որոնց համար կատարվում է վճարումը: Այս դեպքում Ծառայությունների համար վճարումները իրականացվում են վճարման նպատակում նշված հերթականությամբ:

4.5. Պատվիրատուն հնարավորություն ունի Ծառայությունների դիմաց վճարումներ կատարել նաև
«Անձնական էջ»-ի միջոցով: Սրա համար Պատվիրատուն (Ա) մուտք է գործում իր «Անձնական էջ» և այնտեղ տեղադրված առցանց վճարման համակարգի միջոցով կատարում է վճարում, որի արդյունքում համապատասխան դրամական միջոցները հայտնվում են
«Անձնական էջ»-ի հաշվեկշռում: Դրանից հետո Պատվիրատուն պարտավոր է (Բ) «Անձնական էջ»-ում համապատասխան հրահանգներին հետևելով ընտրել այն Ծառայություն(ներ)ը, որի համար գումար է համալրել իր հաշվեկշռին: «Անձնական էջ»-ի միջոցով վճարումներ կատարելիս ընտրված Ծառայություն(ներ)ի համար համապատասխան վճարումը համարվում է կատարված սույն կետում նախատեսված (Ա) և (Բ) գործողությունները կատարելու պահից:

5. Լրացուցիչ ծառայություններ

5.1. Պատվիրատուն հնարավորություն կունենա օգտվել Կատարողի կայքից, որպես կանոն, օրական քսանչորս (24) ժամ: Պատվիրատուն հնարավորություն կունենա նաև կապի մեջ լինել Կատարողի սպասարկման բաժնի հետ էլ. փոստի և հեռախոսի միջոցով:

5.2. Յուրաքանչյուր Պատվիրատու կարող է օգտվել Կատարողի տեխնիկական սպասարկման բաժնի ծառայութուններից, որը գործում է Երկուշաբթիից Ուրբաթ ժամը 10:00-ից 18:00-ը, հեռախոս՝ +374.98401850: Տեխնիկական սպասարկման բաժինը չի աշխատում ՀՀ օրենսդրությամբ սահմանված տոնական և հիշատակի օրերին: Սույն կետում սահմանված

ժամերից հետո, ինչպես նաև կիրակի, տոնական և հիշատակի օրերին

Պատվիրատուն կարող է օգտվել Կատարողի սպասարկման բաժնի ծառայություններից, որոնք սահմանափակվում են Ծառայություններից օգտվելու վերաբերյալ ընդհանուր խորհրդատվությամբ:

5. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

5.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

5.1.1. Ստանալ իրեն մատուցված Ծառայության վճարների մասին անհրաժեշտ տեղեկություններ պարունակող հաշվիներ.

5.1.2. «Անձնական էջ»-ի միջոցով տեղեկանալ պատվիրված Ծառայությունների մասին.

5.1.3. Պայմանագրով նախատեսված այլ իրավունքներ:

5.2. Պատվիրատուն պարտավոր է՝

5.2.1. Վճարել Ծառայությունների համար Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում.

5.2.2. Իր անվանման, գտնվելու վայրի, էլ. փոստի, հեռախոսահամարի, բանկային տվյալների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում տասնօրյա ժամկետում գրավոր տեղեկացնել Կատարողին.

5.2.3. Պայմանագրի կատարման համար Կատարողին ներկայացնել ճշգրիտ տվյալներ.

5.2.4. Կատարել Պայմանագրով նախատեսված այլ պարտականությունները:

5.3. Կատարողն իրավունք ունի՝

5.3.1. Ստանալ վճարում մատուցված Ծառայության դիմաց.

5.3.2. Կասեցնել կամ սահմանափակել Ծառայության մատուցումը կամ միակողմանի հրաժարվել Պայմանագրից՝ Պայմանագրով, ներառյալ համապատասխան Ծառայության Հատուկ Պայմաններով, նախատեսված կարգով.

6.1.1. Պայմանագրով նախատեսված այլ իրավունքներ:

6.2. **Կատարողը պարտավոր է՝**

6.2.1. Պատվիրատուին ներկայացնել ճշգրիտ հաշիվներ մատուցված Ծառայության մասին. Ոչ ֆիզիկական անձ Պատվիրատուների դեպքում վերջիններիս ներկայացվում են հարկային հաշիվներ.

6.2.2. Երաշխավորել Պատվիրատուի տեղեկությունների և հաղորդագրությունների գաղտնիությունը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

6.2.2.1. Տեղեկացնել Պատվիրատուին իր կողմում տեխնիկական անսարքության պատճառով առաջացած Ծառայության ընդհատման մասին՝ հրապարակելով այդ մասին տեղեկատվություն պաշտոնական կայքում (https://www.myweb.am/).

6.2.3. Ողջամիտ ժամկետում վերացնել ի հայտ եկած խափանումները.

6.2.4. Կատարել Պայմանագրով նախատեսված այլ պարտականությունները:

7. **Պատվերից միակողմանի հրաժարումը**

7.1. Միակողմանի հրաժարումը Ծառայություն մատուցողի կողմից

7.1.1. Կատարողը իրավասու է միակողմանի հրաժարվել Հավելված(ներ)ով նախատեսված Ծառայությունների մատուցումից, եթե՝

7.1.1.1. պատվիրատուն չի վճարել Ծառայության համար քառասունhինգ (45) օր շարունակ, սկսած այն օրվանից, երբ Պայմանագրի համաձայն պետք է կատարվեր վճարումը,

7.1.1.2. պատվիրատուն խախտել է Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները և չի վերացրել իր կատարած խախտումները այդ մասին գրավոր նամակով

ծանուցում ստանալու պահից հնգօրյա (5-օրյա)
ժամկետում,

7.1.1.1. պատվիրատուն լուծարվել է,

7.1.1.2. պատվիրատուն գտնվում է սնանկացման կամ լուծարման գործընթացում,

7.2. Միակողմանի հրաժարումը Պատվիրատուի կողմից

7.21. Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն հրաժարվել Հավելված(ներ)ի կատարումից՝ այդ մասին 30 (երեսուն) օր առաջ գրավոր նամակով տեղեկացնելով Կատարողին:

8. Միակողմանի հրաժարման հետևանքները

8.1. Պայմանագրի լուծման դեպքում, եթե Պայմանագիրը լուծվում է Կատարողի կամ Պատվիրատուի կողմից սույն ԸԴ-ի 7.1.1.1-7.1.1.4 կետերի հիման վրա, Պատվիրատուն պարտավոր է վճարել Կատարողին Պայմանագրի համաձայն վճարման ենթակա գումարը մինչև Պայմանագրի լուծման պահը մատուցված Ծառայության դիմաց, եթե այլ բան նախատեսված չէ կոնկրետ Ծառայության Հատուկ Պայմաններում:

8.2. ԸԴ-ի 8.1. կետով սահմանված հիմքով Պատվերը լուծելու դեպքում Կատարողը պատասխանատվություն չի կրում Ծառայության չմատուցման արդյունքում Պատվիրատուի կրած վնասի համար, սակայն Կատարողը պարտավոր է կատարել վերահաշվարկ համաձայն Հավելված(ներ)ում նշված գնացուցակի և վերադարձնել վերահաշվարկված գումարը Պատվիրատուի պահանջով, եթե վաղաժամկետ դադարեցումը վերաբերում է այն ծառայությանը, որի մատուցման Հատուկ Պայմաններում նշված է գումարի վերահաշվարկի և/կամ վերադարձի հնարավորության մասին:
Այն դեպքում, երբ Ծառայության Հատուկ Պայմաններում նախատեսված չէ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում գումարի վերահաշվարկի և/կամ վերադարձի հնարավորության մասին, Կատարողին

վճարված գումարները չեն վերահաշվարկվում և չեն վերադարձվում:
Ծառայության այն տեսակները, որոնք ենթակա են վերահաշվարկի և վերադարձի և որոնց դիմաց վճարումը կատարված է առցանց Կատարողի կայքի «Անձնական էջ»-ի միջոցով, վերահաշվարկվում են բանկի կողմից գանձվող միջնորդավճարի պահումով:

8. Ծառայության մատուցման կասեցումը

8.1. Ծառայություն մատուցողն իրավունք ունի կասեցնել Պատվիրատուին Ծառայության մատուցումը, եթե՝

8.1.1. կասեցումը անհրաժեշտ է Ծառայությունների մատուցման համար սարքավորումների կամ ծրագրերի տեղադրման, վերանորոգման, փոխարինման կամ պահպանման համար.

8.1.2. պատվիրատուն ժամանակին չի վճարել Ծառայության համար.

8.1.3. պատվիրատուն պարբերաբար կամ էականորեն խախտում է Պայմանագրի դրույթները.

8.1.4. առկա է անհաղթահարելի ուժի ազդեցությունը.

8.1.5. կասեցումը պայմանավորված է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նոր ակտերով կամ կարգերով.

8.1.6. Ծառայություն մատուցողը հայտնաբերում է, որ Պատվիրատուն ոչ ճիշտ տվյալներ է ներկայացրել Ծառայության համար դիմելիս և դրա արդյունքը կարող է վնասակար լինել.

8.1.7. կասեցումը պահանջվում է լիազորված մարմինների կողմից:

8.2. Ծառայության մատուցումը չի կարող կասեցվել, եթե Պատվիրատուն վերացնում է կասեցման հիմքում ընկած հանգամանքները նախքան Ծառայության մատուցման նկատմամբ նախատեսվող կասեցման կիրառումը:

9.1. Ծառայության մատուցումը կասեցվում է կասեցումից հինգ (5) աշխատանքային օր առաջ էլեկտրոնային փոստի միջոցով այդ մասին Պատվիրատուին ծանուցելու պայմանով, իսկ եթե նման կերպ ծանուցումը հնարավոր չէ, ապա գրավոր նամակով տեղեկացնելով Կատարողին՝ նշելով կասեցման տևողությունը և պատճառները, բացառությամբ սույն ԸԴ-ի 9.1.2.-9.1.7. կետերով նախատեսված դեպքերի: Սույն ԸԴ-ի 9.1.2.-9.1.7. կետերով նախատեսված դեպքերում կասեցումը կատարվում է առանց նախազգուշացման:

10. Կասեցման հետևանքները

10.1. Կասեցման դեպքում՝

10.1.1. Կասեցվում է Ծառայության մատուցումը.

10.2. Եթե Ծառայության մատուցման կասեցման պատճառը Կատարողն է, նա պարտավոր է կասեցման հիմքում ընկած հանգամանքների վերացումից հետո երկու (2) օրվա ընթացքում վերականգնել Ծառայության մատուցումը: Եթե Ծառայության մատուցման կասեցման պատճառը Պատվիրատուն է, Ծառայության մատուցումը վերականգնվում է Պատվիրատուի դիմումի հիման վրա, որով հավաստվում է, որ վերացված են կասեցման պատճառները:

11. Պատասխանատվությունը

11.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Պատվիրատուին Ծառայություն չմատուցելու հետևանքով կամ ցանկացած այլ դեպքում միայն իր մեղքով պատճառված իրական վնասի համար, ընդ որում՝ յուրաքանչյուր դեպքի համար Կատարողի պատասխանատվության չափը սահմանափակվում է 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

11.2. Կատարողը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուին Ծառայության չմատուցման հետևանքով կամ ցանկացած այլ դեպքում պատճառված բաց թողնված օգուտի համար:

10.1. Սույն ԸԴ-ի 11.1 կետով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են միմյանց հատուցել պարտավորության խախտման արդյունքում պատճառված վնասները՝ Պայմանագրով սահմանված կարգով:

11. Փոփոխությունների կատարումը Պայմանագրում

11.1. Կատարողն իրավունք ունի միակողմանի փոփոխելու Պայմանագրի ցանկացած դրույթ՝ այդ մասին փոփոխությունը ուժի մեջ մտնելուց 30 (երեսուն) օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին, բացառությամբ 12.3. կետով նախատեսված դեպքերում կատարվող փոփոխությունների: Այն դեպքում, երբ կատարվում է այնպիսի փոփոխություն, որի հետ Պատվիրատուն համաձայն չէ, նա իրավունք ունի միակողմանի հրաժարվել Պատվերից՝ սույն ԸԴ-ի 8.1 կետով սահմանված հետևանքով այդ մասին փոփոխությունը ուժի մեջ մտնելուց 15 (տասնհինգ) օր առաջ գրավոր նամակով տեղեկացնելով Կատարողին:

11.2. Ծառայության գնի իջեցմամբ և/կամ Ծառայության տեխնիկական հնարավորությունների բարելավմամբ պայմանավորված Պայմանագրում փոփոխություններ կատարելիս Կատարողը իրավունք ունի միակողմանի փոփոխել Պայմանագրի համապասխան դրույթները Պատվիրատուին այդ մասին ծանուցելով: Այս դեպքում տվյալ փոփոխությունները ուժի մեջ են մտնում ծանուցման հաջորդող ամսվա առաջին օրը, եթե ծանուցման մեջ այլ ժամկետ սահմանված չէ:

11.3. Պատվիրատուն իրավունք ունի Կատարողի համաձայնությամբ փոփոխելու իր կողմից Ծառայությունների ցանկը՝ դրա համար ստորագրելով նոր Հավելված, կամ այդ փոփոխությունները կարող են իրականացվել Պատվիրատուի կողմից «Անձնական էջ»-ի միջոցով Կատարողի կայքում (https://www.myweb.am/) նման հնարավորության առկայության դեպքում:

12. Ծանուցումներ

13.1 Բացառությամբ սույն Պայմանագրով նախատեսված դեպքերի, Կողմերի Պայմանագրի հետ կապված բոլոր թույլատրելի կամ պահանջվող ծանուցումները պատշաճ են համարվում, եթե կատարվել են գրավոր՝ էլ. փոստի, կարճ հաղորդագրության (SMS) կամ նամակի միջոցով՝ Պատվերում նշված տվյալներով:

13. Կիրառելի օրենքը / Վեճերի լուծման կարգը

13.1. Պատվերը ղեկավարվում և մեկնաբանվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Կողմերը բոլոր վեճերը լուծում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերի լուծումը սահմանվում է կոնկրետ Ծառայության Հատուկ Պայմաններում:

14. Կոնֆիդենցիալ տեղեկատվության պահպանումը

14.1. Պայմանագիրը և յուրաքանչյուր Կողմի կողմից Պայմանագրի կապակցությամբ իրականացված բանակցությունների ընթացքում մյուսին հայտնած տեղեկատվությունը համարվում է կոնֆիդենցիալ, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար: Կողմերը իրավունք չունեն բացահայտել այդպիսի տեղեկատվությունը առանց մյուս Կողմի նախնական գրավոր համաձայնության, բացառությամբ հետևյալ դեպքերի՝ (Ա) տեղեկատվության բացահայտումը կատարվել է օրենքի պահանջով կամ (Բ) սույն կետի համաձայն կոնֆիդենցիալ համարվող տեղեկատվությունը երրորդ անձի կողմից բացահայտման ուժով դառնում է հանրամատչելի:

14.2. Բոլոր մյուս դեպքերում, Կողմերը պարտավոր են տեղեկացնել և հանձնարարել իրենց աշխատողներին գաղտնի պահել Պայմանագիրն և այն չբացահայտել Պայմանագրի Կողմ չհանդիսացող երրորդ անձանց համար:

13. Հրապարակումներ ԶԼՄ-ով

13.1. Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի ԶԼՄ-ով կամ այլ կերպ մյուս Կողմի կամ նրա հետ կնքված Պայմանագրի վերաբերյալ տեղեկատվություն զետեղել միայն մյուս Կողմի հետ խորհրդակցելուց և նրա գրավոր համաձայնությունը ստանալուց հետո:

14. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

14.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պատվերը ստորագրելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, սաբոտաժը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: